

15

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2021



Luys



Linyu®

2017-2021ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ԵՐԵՔ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ**



Արտաքին աշխարհի հետ շփումներում կարևոր դերակատարում ունի նաև երկրից արտահանման ծավալները: Արտաքին առևտրի, հատկապես՝ արտահանման, ծավալների աճը, արտահանվող ապրանքների և շուկաների բազմազանությունը վկայում են տվյալ երկրի տնտեսության զարգացածության, միջազգային ընդունված չափանիշներին համապատասխան արտադրության կազմակերպման և արտաքին ու ներքին շուկաներում ակտիվ մարքեթինգային ու խրախուսման քաղաքականության իրականացման մասին: Արտահանումը կարևոր է բիզնեսի համար, քանի որ այն հնարավորություն է տալիս զարգանալ և շարժվել համաշխարհային զարգացումներին զուգահեռ, ձեռք բերել նոր գիտելիքներ, հայտնաբերել և ներդնել նոր տեխնոլոգիաներ և զարգանալով՝ զարգացնել երկիրն ու հասարակությանը: Երկրի ղեկավար կազմը մշտապես ուշադրություն է դարձնում արտահանման խրախուսմանը՝ երբեմն իրականացնելով տարբեր միջոցառումներ, տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվական և մարքեթինգային աջակցություն գործարարներին, աջակցելով միջազգային ցուցահանդեսներին և կոնֆերանսներին նրանց մասնակցությանը և այլն:

Ներդրումներն անչափ կարևոր են երկրի զարգացման համար: Դրանք երկրի և տնտեսության կառուցման ու հզորացման հիմնաքարերից են, նաև զբաղվածության և տնտեսական աճի ապահովման հիմնական գործոններից: Օտարերկրյա ներդրումները հնարավորություն են տալիս երկիր բերել նորարարություններ, նոր գիտելիքներ և փորձ, նոր հնարավորությունների ու կապեր, արտահանման նոր կարողություններ: Ուստի, կառավարությունները մեծ կարևորություն են տալիս ներդրումների խրախուսմանը և ձեռնարկում են միջոցներ, հատկապես՝ մեծածավալ օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ:

Սույն փաստաթուղթը, հանդիսանում է «2017-2021թթ. ընթացքում ՀՀ երեք կառավարությունների ծրագրային դրույթներով իրականացված աշխատանքների համեմատություն» շարքի երրորդ վերլուծական նյութը՝ ներկայացնելով արտահանման խրախուսման և ներդրումների ներգրավման նպատակով երեք կառավարությունների ծրագրային դրույթները և դրանց իրականացման նպատակով ձեռնարկված քայլերը: Ինչպես և մյուս վերլուծություններում, ուսումնասիրվել է միայն տվյալ կառավարության գործունեության ժամանակահատվածի համար նախատեսված քայլերը և կատարված աշխատանքները:

Մինչ այս, արդեն իսկ հրապարակվել են ԵՄ և ԵԱՏՄ հետ տնտեսական համագործակցության, գործարար միջավայրի բարելավման և ՓՄՁ զարգացման ուղղությամբ երեք կառավարությունների ներկայացրած ծրագրային դրույթների իրականացման վերաբերյալ վերլուծությունները:

ՄԱՍ I. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագիր 2017-2022թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019-2024թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2021-2026թթ.
Արտահանման վրա հիմնված աճի ապահովման համատեքստում ՀՀ կառավարությունը թիրախավորում է ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ հասցնելով 40-45 տոկոսի:	Ծրագրային ժամանակահատվածի ավարտին ապրանքների և ծառայությունների արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ պետք է հասնի 43-45 տոկոսի:	- Տեղական շուկայի ռեսուրսների օգտագործման տեսանկյունից կառավարությունը նպաստելու է տեղական և ԵԱՏՄ անդամ արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացմանը և Հայաստանում կլաստերների ձևավորմանը, ապահովելու է արտաքին շուկաներում Հայաստանի տնտեսավարողների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը և վերջիններիս առավելությունների մասին իրազեկմանը: - Նախատեսվում է ընդլայնել արտահանման ապահովագրության գործիքակազմը, ներդնել միջազգային փորձում կիրառվող մի շարք գործիքներ և Հայաստանի արտահանող ընկերությունների համար ստեղծել առևտրի ֆինանսավորման ավելի լավ պայմաններ և ավելի մեծ հնարավորություններ՝ նվազեցնելով նաև արտահանման գործարքներից բխող ռիսկերը:

Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ հարաբերակցության որոշակի ցուցանիշի ապահովման դրույթներ նախատեսված են եղել 2017 և 2019 թվականների կառավարությունների ծրագրում: Եթե 2017 թվականի կառավարությունը

նպատակադրել էր մինչև 2022 թվականի ավարտն ապահովել արտահանում/ՀՆԱ հարաբերակցության 40-45%, ապա 2019 թվականի կառավարությունը ձգտում էր հասնել 43-45% ցուցանիշին՝ 2024 թվականի ընթացքում:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների¹ 2017 թվականի ավարտին ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալները կազմել են 4 409,6 մլն ԱՄՆ դոլար: Նույն ցուցանիշը 2019 թվականի վերջում կազմել է 5 718,1 մլն ԱՄՆ դոլար²: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի³ 2017 թվականի համախառն ներքին արդյունքը կազմել է 11 527,4 մլն ԱՄՆ դոլար (2016 թվականի համեմատ աճելով 7.5%-ով), իսկ 2019 թվականին՝ 13 618,6 մլն ԱՄՆ դոլար (2018 թվականի համեմատ աճելով 7.6%): Արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 2017 և 2019 թվականներին կազմել է համապատասխանաբար 38.2% և 42%:

ՀՆԱ-ի և արտահանման աճի տեմպերը պահպանվելու դեպքում, կարծում ենք, 2017 թվականի կառավարությունը կկարողանար ապահովել ծրագրով նախատեսված ցուցանիշի իրականացումը:

Ինչ վերաբերում է 2019 թվականի կառավարությանը, թեև 2019 թվականի տվյալներով այն արդեն իսկ մոտ էր ծրագրով նախատեսված ցուցանիշին, և կարծում ենք՝ COVID-19-ի համավարակի բացակայության դեպքում կկարողանար ապահովել այն: Սակայն, քանի որ տվյալ կառավարությունը գործել է նաև 2020 թվականին (համավարակի և պատերազմի ժամանակ), և պետք է ունենար ռիսկերի կառավարման մոտեցումներ, ինչպես նաև ճգնաժամի հաղթահարման լուծումներ, ճիշտ չի լինի չանդրադառնալ այդ տարվա ցուցանիշին, ինչպես նաև դրանից հետո նախատեսված ցուցանիշին հասնելու հավանականությանը:

Այսպես, 2020 թվականին ՀՆԱ-ն 2019 թվականի համեմատ նվազել է 7,4%-ով: Ի տարբերություն ՀՆԱ-ի, արտահանման ծավալների անկումն ավելի զգալի էր՝ շուրջ 35%: Արդյունքում արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 2020 թվականին կազմել է 29.8%՝ շուրջ 12 տոկոսային կետով ցածր 2019 թվականի ցուցանիշից:

Կհասնե՞ր արդյոք կառավարությունը նախատեսված ցուցանիշին մինչև ծրագրավորված ժամկետի ավարտը: Ըստ Ասիական զարգացման բանկի կանխատեսումների, 2021 թվականի ՀՆԱ աճը կկազմի 5,2%: Բանկը 2022 թվականի համար կանխատեսել է 3,5 տոկոսանոց աճ: ՀՆԱ-ի 5,2% աճի դեպքում, որպեսզի հնարավոր լինի հասնել առնվազն 2018 թվականի


¹ https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/BOP_arm_for%20siteBPM6_rev.xls

² Ուսումնասիրությունում չի վերլուծվում 2018 թվականի ցուցանիշը, քանի որ այն համարվում էր անցողիկ ժամանակահատված: Այնուամենայնիվ, նյութում տրվում է 2018 թվականի ցուցանիշը զուտ վիճակագրական առումով:

³ <https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>, https://www.armstat.am/file/article/sv_03_21a_112.pdf

ցուցանիշին, արտահանումը պետք է աճի մոտ 40%-ով: Իսկ 2023 թվականին արտահանում/ՀՆԱ 43-45% հարաբերակցության հասնելու համար, 2022-2023 թվականներին ՀՆԱ-ի մոտ 7% աճի պայմաններում ՀՀ կառավարությունը պետք է ապահովի ապրանքների և ծառայությունների արտահանման աճ առնվազն 14%-ի չափով (այսպիսի աճը կարող է ապահովել արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 45%-ի սահմաններում): 2021-2023 թվականներին ՀՆԱ-ի 7% աճի պայմաններում նույնպես 2023 թվականին հնարավոր կլիներ ապահովել արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 44%-ի սահմաններում (սակայն միայն արտահանման ներկայացված աճի դեպքում): Հետևաբար, 2019 թվականի կառավարությունն իր գործունեությունը շարունակելու դեպքում չէր կարող հասնել նախատեսված ցուցանիշին:

Գծագիր 1. Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ հարաբերակցություն, 2016-2020թթ.



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ կենտրոնական բանկ, հաշվարկներ

2021 թվականի կառավարության ծրագրով նախատեսված կոոպերացիոն կապերի ձևավորման, Հայաստանի տնտեսավարողների վերաբերյալ տեղեկատվության տարածման և առավելությունների մասին իրազեկման գործառույթ

Ժամանակին իրականացնում էր «Բիզնես Արմենիա» կազմակերպությունը, որի գործունեության տարօրինակ ձևով մասնավորեցմանն անդրադարձել ենք դեռևս 2019 թվականին:

Այսօր դեռևս անհասկանալի է, թե ինչպես է նախատեսում կառավարությունն իրականացնել այս գործողությունը: Ներդրումների աջակցության կենտրոնը, ըստ էության, չունի այդպիսի գործառույթ: Նման գործառույթ չունեն նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումները (վերջիններս հիմնականում պատասխանատու են քաղաքականության մշակման համար): Այդ նպատակով չկա որևէ պետական կառույց, որը կիրականացներ տեղական և օտարերկրյա մասնավոր ընկերությունների միջև գործարար կապերի հաստատման կամ խթանման միջոցառումներ: Իսկ նշված խոստումն իրականացնելու համար անհրաժեշտ կլինի զգալի ջանքեր ներդնել՝ իրազեկման, գործարար համաժողովների կամ ցուցահանդեսների կազմակերպման, մասնակցության և այլնի համար: Տեսականորեն դա հնարավոր է, եթե ստեղծվի այդ գործառույթն ունեցող կառույց կամ նշված գործողության իրականացումը պատվիրակվի մասնավոր ընկերության: Առաջին դեպքում մենք կունենանք կորսված հնարավորություն, ի դեմս «Բիզնես Արմենիայի», որի կարողությունները ժամանակին կարելի էր օգտագործել և ձևավորել նոր կառավարության պատկերացումներին համահունչ մոտեցումներ կամ աշխատառժ: Իսկ նոր կառույցի ստեղծումը կպահանջի ժամանակի և ռեսուրսների զգալի ներդրում, ինչը, կարծում ենք, կսկսի իր պտուղները տալ այս ծրագրի վերջում կամ հաջորդ կառավարության օրոք:

Իսկ մասնավորին պատվիրակելը ենթադրում է լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հատկացում (քանի որ մասնավորը կունենա շահույթի ակնկալիք, իսկ մասնագետների վճարները կլինեն պետականից ավելի բարձր) և սուբյեկտիվ մոտեցումների կիրառում: Իսկ հստակ գնահատման չափորոշիչների և պատշաճ մոնիտորինգի բացակայության պարագայում այս մոտեցումը կենթարկվի ձախողման:

Ինչ վերաբերում է արտահանման ապահովագրության գործիքակազմի ընդլայնմանը, թեև այն կարևոր գործողություն է, սակայն կարծում ենք, որ դա չպետք է տեղ գտներ կառավարության ծրագրում: Դա արտահանման ապահովագրությամբ զբաղվող կառույցի ամենօրյա պարտականությունն է՝ ներդնել նորանոր գործիքներ՝ արտահանման հետ կապված ռիսկերը նվազեցնելու նպատակով, հատկապես եթե տվյալ կազմակերպությունը շահույթ հետապնդող ընկերություն (փակ բաժնետիրական ընկերություն) է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- 2017 թվականի կառավարությունը մեծ կարևորություն էր տալիս արտահանման խրախուսմանը և «Բիզնես Արմենիա» հիմնադրամի միջոցով ձեռնարկում էր արտահանման խրախուսմանն ուղղված ծրագրեր:
- 2019 թվականի կառավարությունը ամբողջությամբ ձախողել է արտահանման խթանմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացումը 2019 և 2020 թվականներին, չեն իրականացվել արտահանողների աջակցության, նրանց անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման կամ նոր շուկաներ մուտք գործելու համար նախատեսված աշխատանքների մեծ մասը:

ԱՄՓՈՓՈՒՄ

- 2017 թվականի կառավարությունն իր գործունեությունը շարունակելու դեպքում կարող էր հասնել արտահանում/ՀՆԱ նախատեսված հարաբերակցությանը: Իսկ 2019 թվականին ընտրված կառավարությունը, 2021 թվականի արտահերթ ընտրությունները չլինելու դեպքում նույնիսկ, չէր կարողանալու հասնել այն թիրախներին, որոնք դրված էին իր ծրագրում:
- Այսօր չկա համապատասխան մարմին, որը կարող է իրականացնել 2021 թվականին ընտրված կառավարության ծրագրած արտաքին շուկաներում Հայաստանի տնտեսավարողների վերաբերյալ տեղեկատվության տարածումը: Նախկինում գործող կառույցը մասնավորեցվել է, և ներկայումս, ըստ էության, արտահանման խթանման կոնկրետ պետական աջակցության ծրագրեր իրականացնող պետական մարմին առկա չէ:

ՄԱՍ II. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

<< կառավարության ծրագիր 2017-2022թթ.	<< կառավարության ծրագիր 2019-2024թթ.	<< կառավարության ծրագիր 2021-2026թթ.
1. Ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ինստիտուտների ամրապնդման նպատակով << կառավարությունը նախատեսում է՝ - մինչև 2017 թվականի ավարտն առկա միջազգային չափորոշիչներին համապատասխան մշակել «Օտարերկրյա ներդրումների մասին» << նոր օրենքի նախագիծը. - մինչև 2017 թվականի ավարտը կատարելագործել ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) գործունեությունը կարգավորող իրավական դաշտը. - մինչև 2018 թվականի ավարտը մշակել պետություն-մասնավոր գործընկերության համար օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումները. - մինչև 2018 թվականի ավարտը կատարելագործել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մասին << օրենսդրությունը. - մինչև 2018 թվականի ավարտն իրագործել <<-ում որոշակի ներդրումների դիմաց՝ << քաղաքացիություն շնորհելու ծրագիրը: 2. Ընդհանուր ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականությունից դեպի «թիրախավորված» ռազմավարության	- Հատուկ ուշադրություն կդարձվի օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացման հարցերին: - Անհրաժեշտ է լինելու ստեղծել գրավիչ պայմաններ՝ օտարերկրյա կապիտալը Հայաստան բերելու համար: Նշվածն իրագործելու համար կառավարությունը գործելու է մի քանի ուղղություններով: Արդյունքում՝ Հայաստանում պետք է ձևավորվի կապիտալի և աշխատանքի հարկման այնպիսի միջավայր, որի պայմաններում ձեռնարկատիրական ակտիվների շահագործումը կապահովի առավել բարձր շահութաբերություն: - Կառավարությունն արագացնելու է պետություն - մասնավոր գործընկերության իրավական կարգավորումների և դրանց կիրառության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը: - Հատուկ ուշադրության է արժանանալու պոտենցիալ ներդրողների նախնական ուսումնասիրությունների հետ կապված ծախսերի կրճատման և արդյունավետության բարձրացման հարցը: Հայաստանում ներդրումային որոշումների նախապատրաստման փուլում, օտարերկրյա ներդրողների ժամանակային և ֆինանսական ծախսերը կրճատելու նպատակով առաջարկվելու	- Տնտեսական քաղաքականության թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է լինելու ներդրում/<ՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25%-ի: Կառավարության քաղաքականությունը միտված է լինելու օտարերկրյա ուղղակի ներդրումներ/<ՆԱ 6% հարաբերակցություն ապահովելուն՝ շեշտադրելով որակյալ, գիտելիքահեղձ ներդրումային ծրագրերը: - Կառավարությունը որդեգրելու է գործարար տեղեկատվության և շուկաների ուսումնասիրությունների հնարավորինս լայն տարածման քաղաքականություն՝ այսպիսով նվազեցնելով ներդրողների համար առաջնային որոշում կայացնելու համար անհրաժեշտ ժամանակը:

քաղաքականության անցում կատարելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ - մինչև 2017 թվականի ավարտը քննարկել և առաջարկություններ ներկայացնել ընտրված թիրախային ոլորտներում (այդ թվում՝ մանածագործություն, հագուստի արտադրություն, կոշիկի արտադրություն) և ըստ գործունեության վայրերի աշխատատեղերի ստեղծումը խթանող հնարավոր արտոնությունների վերաբերյալ. - մինչև 2017 թվականի ավարտը զարգացնել ներդրումային ծրագրերի փաթեթների՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման և դրանց առաջնորդման համար Հայաստանի զարգացման հիմնադրամի կարողությունները և ապահովել այդ գործառույթի շարունակականությունը. - մինչև 2017 թվականի ավարտը ամրապնդել Հայաստանի զարգացման հիմնադրամի կարողությունները «Մեկ պատուհան» սկզբունքի ամբողջական կիրառմամբ՝ ներդրողների հետ աշխատանքի, ներդրումների ներգրավման և հետներդրումային սպասարկման ուղղությամբ. - մինչև 2017 թվականի ավարտը մշակել տնտեսական դիվանագիտության կիրառական մոտեցումներ. 3. Ստեղծարար և նորարարական բիզնեսների զարգացում, տեխնոլոգիական զարգացման խթանում:	են «մեկ կանգառի» ծառայություններ: Օտարերկրյա ներդրողներին տրամադրվելու է նաև հետներդրումային սպասարկման ծառայությունների որոշակի շրջանակ՝ տեղական միջավայրին հարմարվելու սահուն ընթացք ապահովելու նպատակով: Ներքին խնայողությունների խթանման և օտարերկրյա ներդրումների ծավալների շնորհիվ կառավարության ներկա ծրագրի իրականացման ավարտին հիմնական միջոցների տարեկան համախառն կուտակումը ՀՆԱ-ի նկատմամբ պետք է հասնի 23-25% մակարդակի:	
--	--	--

Ցանկացած տնտեսական համակարգում կայուն աճի և երկարաժամկետ տնտեսական զարգացման հիմքը կատարվող ներդրումներն են: Այդ է պատճառը, որ բոլոր կառավարությունները կարևոր դեր են հատկացնում ներդրումային միջավայրի գրավչության ապահովմանը և ներդրումների (հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրումների) ներգրավմանը: Ներդրումային միջավայրը Հայաստանում հիմնականում կարգավորվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 1994 թվականին: Վերջին փոփոխությունը նշված օրենքում կատարվել է 2007 թվականին: Ժամանակին այս օրենքը համարվում էր առաջադեմ, քանի որ Հայաստանի տնտեսությունը ներդրումների առումով գնահատվում էր բաց և առանց էական սահմանափակումների, ինչը հնարավորություն էր տալիս մրցակցել հարևան շատ երկրների հետ: Հետագայում, համաշխարհային տնտեսության զարգացմանը և փոփոխությանը զուգահեռ, նոր ներդրումներ ներգրավելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել վերանայել ներդրումային օրենսդրությունը:

2015 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունվեց ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը, որը սահմանում էր ՀՀ ներդրումային քաղաքականության հիմնական դրույթները և որն այսօր էլ հիմք է ընդունվում ներդրումային քաղաքականության մշակման գործում: Դեռևս 2015 թվականին, ներդրումային դաշտը բարելավելու նպատակով, Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից, ՀՀ կառավարության հետ համատեղ, ի հայտ են բերվել օտարերկրյա ներդրումների մուտքի և պաշտպանության հետ կապված որոշակի սահմանափակումներ: Այս ուսումնասիրության և ներկայացված առաջարկությունների հիման վրա 2017 թվականին ՀՀ ԱԺ քննարկմանն էր ներկայացվել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը: Սակայն 2018 թվականի իշխանափոխությունից հետո նախագիծը հանվել է օրակարգից և չի քննարկվել ԱԺ կողմից մինչ օրս:

ՀՀ-ում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտին զուգահեռ գործում են այլ իրավական ակտեր ևս: Դրանցից է 2011 թվականին ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը: Այս օրենքում միակ փոփոխությունը կատարվել է 2018 թվականի հոկտեմբերին, որոնք նախաձեռնվել էին 2017 թվականի կառավարության կողմից և ընդունվել էր մինչև նոր Ազգային ժողովի ձևավորումը: Այսպիսով կարելի է ասել, որ 2017 թվականի կառավարությունն իրականացրել է ներդրումների օրենսդրական դաշտի բարելավման առումով 2017 թվականի համար նախատեսված գործողությունները:

Ներդրումների ներգրավման առումով էական նշանակություն ունի նաև ներդրողների հետ աշխատանքը համակարգող կառույցի (կառույցների) գործունեության կատարելագործումը, ինչը նախատեսված էր 2017 թվականի կառավարության ծրագրով: Այդ

աշխատանքների իրականացման նպատակով Հայաստանի զարգացման հիմնադրամը, որը հետագայում ստացավ «Բիզնես Արմենիա» հիմնադրամ անվանումը, արդեն իսկ 2017 թվականի վերջում մատուցում էր ծառայություններ «Մեկ պատուհանի» սկզբունքով: Ավելին, հիմնադրամը, ԵՄ աջակցության ծրագրերի շրջանակներում համագործակցություն էր հաստատել «Բիզնես Ֆրանս» ընկերության հետ, որի նպատակն էր զարգացնել հիմնադրամի կարողությունները ներդրումային ծրագրերի փաթեթների պատրաստման, ներդրողների հետ աշխատանքի, հետներդրումային սպասարկման ուղղությամբ և այլն: Թեև այս ծրագրի շրջանակներում զգալի ժամանակ և ռեսուրսների էին ծախսվել հիմնադրամի աշխատակիցների վերապատրաստման և համապատասխան կարողությունների զարգացման ուղղությամբ, իշխանափոխությունից կարճ ժամանակ անց այս կառույցը օտարվեց մասնավորին, իսկ տրամադրված գիտելիքները փոշիացվեցին: Դրանից միայն 1,5 տարի անց ստեղծվեց նորը՝ Ներդրումների աջակցման կենտրոնը, որի ամբողջական գործունեության և համապատասխան կարողությունների ձևավորման և կատարելագործման համար դեռ անհրաժեշտ կլինեն տարիներ: Այս կառույցը, ըստ էության, տարիներ ի վեր գործող ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնն է: Իրականում այս փոփոխությունների արդյունքում տուժեցին և՛ ՓՄՁ, և՛ ներդրումների մասերով իրականացվող աշխատանքները:

2019 թվականի կառավարության խոստումները անմիջական առնչություն ունեն օրենսդրության բարելավման հետ, որն այդպես էլ չի իրականացվել: Մասնավորապես, օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացումը և օտարերկրյա կապիտալը Հայաստան բերելու համար գրավիչ պայմանների ստեղծումն անմիջականորեն կապված են ներդրումների օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարման հրամայականով, որոնք մինչ օրս այդպես էլ չեն կատարվել: Ինչ վերաբերում է շահութաբերության բարձրացմանը՝ հարկման փոփոխությունների միջոցով, միջազգային պրակտիկայում չի ողջունվում շահութաբերության բարձրացման լուծումը հարկերի մեխանիկական իջեցման միջոցով: Ավելի կարևոր է տարբեր գործիքների՝ նոր տեխնոլոգիաների ներդրում, տեխնոլոգիական վերազինում, ձեռնարկությունների կարողությունների բարձրացում և այլն, կիրառմամբ մրցունակության և արդյունավետության բարձրացման միջոցով շահութաբերության ցանկալի մակարդակի ապահովումը: Այսօր սակայն, տարբեր ոլորտներում իրականացված ուսումնասիրությունները չեն բացահայտել կառավարության կողմից ձեռնարկությունների շահութաբերության բարձրացմանն ուղղված ոչ հարկային խթանների կիրառելիություն (բացառությամբ, թերևս, գյուղատնտեսության ոլորտի):

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրերը կարևոր նշանակություն ունեն երկրի տնտեսական զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման առումով: ՊՄԳ-ն հաջողվում է հիմնականում այն երկրներում, որոնք հիմնվում են

ամուր օրենսդրահրավական դաշտի վրա: ՀՀ կառավարության առաջին քայլը՝ ուղղված ՊՄԳ իրավական հիմքերի ստեղծմանը, 2017թ. նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականություն» փաստաթուղթն էր: 2019 թվականի հունիսի 28-ին ընդունվեց «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը: 2021 թվականի հունիսին օրենքը ենթարկվեց փոփոխության՝ դեռևս ընդունման պահին առկա որոշ թերություններ շտկելու նպատակով: 2019 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ վարչապետի թիվ 1898-Ա որոշմամբ հաստատվեց նաև օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը: Նշված որոշման իրականացման աշխատանքների շրջանակներում 2020 թվականի նոյեմբերին ընդունվեց «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գծով ՀՀ պայմանական պարտավորությունների հաշվարկման և գնահատման մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1785-Լ որոշումը, 2021 թվականին՝ «Հայաստանի Հանրապետության պետություն-մասնավոր գործընկերության պարտավորությունների թույլատրելի առավելագույն սահմանաչափ սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 955-Լ որոշումը:

Դեռևս չեն ընդունվել նախատեսված հետևյալ իրավական ակտերը.

- «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի իրականացման նկատմամբ կիրառելի ընթացակարգերը հաստատելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում (նախատեսված էր 2020 թվականի 2-րդ տասնօրյակը):
- «Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգերին վերաբերող մեթոդական ձեռնարկները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում (նախատեսված էր 2020 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակը):

Նշված իրավական ակտերի բացակայության պատճառով ՊՄԳ օրենսդրական դաշտը դեռևս ամբողջական չէ:

Պոտենցիալ ներդրողներին անհրաժեշտ ծառայությունների և խորհրդատվության տրամադրման, ինչպես նաև ներդրողներին հետներդրումային սպասարկման ծառայությունների մատուցման առումով կարևոր է մեկ անգամ ևս շեշտել «Բիզնես Արմենիա» հիմնադրամի անհասկանալի մասնավորեցման պատմությունը, շուրջ 1,5 տարի պետության կողմից նշված ծառայությունների մասով համապատասխան կառույցի բացակայությունը, այնուհետև նոր կառույցի ձևավորումը, որը պարզ է, չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ: Այսօր էլ, դեռևս չկա հստակ տեղեկատվություն այդ կառույցի գործունեության, դրա կողմից

2020 թվականի ընթացքում մատուցած ծառայությունների, դրա որակի և այլնի վերաբերյալ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն ամբողջությամբ չի կատարում ներդրողների համար «Մեկ պատուհանի» իր գործառույթը:

2019 թվականի կառավարության կարևոր խոստումներից էր նաև կառավարության ծրագրի իրականացման ավարտին հիմնական միջոցների տարեկան համախառն կուտակումը ՀՆԱ-ի նկատմամբ հասցնել 23-25% մակարդակի: 2020 թվականի տվյալներով այդ ցուցանիշն ուներ հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1. Համախառն կուտակում/ՀՆԱ 2012-2018թթ., % ընդամենի նկատմամբ

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Համախառն կուտակում	24,7	22,1	21,3	20,7	18,0	18.4	22.4	17.4	17.9
հիմնական միջոցների համախառն կուտակում	23,6	21,2	20.0	20,6	17,3	17.6	16.7	15.8	16.6
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխում	1,1	0,9	1.3	0,1	0,7	0.8	5.7	1.6	1.3

Աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ

Աղյուսակից պարզ է դառնում, որ նախ կառավարությունը թիրախ է սահմանել 2012թ. մակարդակը: Ցուցանիշը մինչև 2018-2019թ. արձանագրել է անկում՝ հասնելով մինչև 15,8%: Իհարկե 2020 թվականին նկատվել է դրա փոքր աճ, սակայն այն բավարար չէր նախատեսվող ցուցանիշին հասնելու համար: 2021 թվականի առաջին եռամսյակի տվյալներով հիմնական միջոցների համախառն կուտակումը գրանցել է որոշակի աճ 2020 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ կազմելով ընդամենը 11,5%:

2021 թվականի կառավարությունը նախատեսում է ներդրում/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25%-ի, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 6%:

Աղյուսակ 2. Ներդրում/ՀՆԱ և օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2017-2021 թթ., %

	2017	2018	2019	2020
Ներդրումներ/ՀՆԱ	18.4	22.4	17.4	17.9
ՕՈՒՆ/ՀՆԱ	2.17	2.04	1.87	0.93

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Վերջին տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ ներդրում/ՀՆԱ և ՕՈՒՆ/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է 2017 թվականի համեմատ: Ճիշտ է, 2020թ. ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը ունեցել է որոշակի դրական միտում, բայց այն շատ ցածր է ՀՀ կառավարությամբ նախանշված մակարդակին հասնելու համար: Ավելին, 2021 թվականի առաջին կիսամյակում այդ ցուցանիշը ավելի ցածր տոկոսով է աճել 2020 թվականի առաջին կիսամյակի նկատմամբ (ընդամենը 0,2%): Նշված տեմպերով շարժվելու դեպքում, իհարկե, հնարավոր չէ հասնել նախանշված ցուցանիշներին:

Ընթացիկ տեմպերով առաջնորդվելու դեպքում հնարավոր չէ հասնել նաև ՕՈՒՆ/ՀՆԱ նախատեսված ցուցանիշին, որը 2020 թվականի տվյալներով կազմել է ընդամենը 0,93%: Կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշին հասնելու համար օտարերկրյա ուղղակի ներդրումները պետք է աճեն մի քանի անգամ, այն էլ՝ եթե ՀՆԱ-ն էական փոփոխությունների չենթարկվի: Հաշվի առելով նաև այն հանգամանքը, որ առայժմ չեն նշմարվում օտարերկրյա ներդրողների խրախուսման միջոցառումներ, ներդրումների մասին օրենսդրությունը դեռևս չի ենթարկվել փոփոխության՝ ներդրողների պաշտպանվածությանն առնչվող հարցերը կարգավորելու նպատակով, կառավարության ծրագրով նախատեսված այս ցուցանիշի ապահովումը այսօրվա դրությամբ խիստ կասկածելի է:

Ինչ վերաբերում է մյուս խոստմանը, այսօր դժվար է տալ դրա իրականացման իրատեսականության գնահատական, քանի որ դեռևս հստակ չէ, թե ինչպես և ինչ միջոցներով (հարթակներով) է ՀՀ կառավարությունը նախատեսում տարածել ներդրողների համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ նրանց համար ընդունելի լեզուներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- 2019 թվականի կառավարության կողմից ոչ միայն կասեցվել է ներդրումների օրենսդրական դաշտի բարեփոխման աշխատանքները, այլև նոր նախաձեռնություններ չեն իրականացվել, և այդ հարցը մատնվել է մոռացության, թեև հարցը համարվել է օրակարգային այս կառավարության համար:
- Ներդրումների խթանման գործուն մեխանիզմների առումով ևս առկա է ծախսողում. շուրջ 1,5 տարի պոտենցիալ և գործող ներդրողներին չի տրամադրվել որևէ աջակցություն՝ ներդրողների աջակցության «Մեկ պատուհանի» մասնավորեցման պատճառով:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019 թվականի կառավարության քայլերը հիմնականում փոխկապակցված չեն եղել և շատ հաճախ հակասել են ծրագրային խոստումներին (դրա վառ օրինակն է ներդրողների աջակցության կառույցում մասնակցության դադարեցումը), այսօրվա կառավարության ծրագրային դրույթների կատարումը կարելի է գնահատել ոչ իրատեսական:

ԱՄՓՈՓՈՒՄ

- 2019 թվականի կառավարության ներդրումներին առնչվող խոստումները անմիջականորեն կապված են օրենսդրության հետ, սակայն 2017 թվականին ՀՀ ԱԺ քննարկման ներկայացված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը իշխանափոխությունից հետո հանվել է օրակարգից և այլևս չի քննարկվել ԱԺ կողմից:
- «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի միակ փոփոխությունը կատարվել է 2018 թվականին, որն իրականում դեռևս 2017 թվականի կառավարության կողմից մշակված փաստաթուղթն է եղել:
- «Բիզնես Արմենիան» 2017 թվականին մատուցում էր ծառայություններ «Մեկ պատուհան» սկզբունքով: Կառույցը օտարվեց մասնավորին իշխանափոխությունից հետո և շուրջ 1,5 տարի ներդրողները չունեին կառույց, որը կաջակցեր կամ կուղղորդեր նրանց: 2020 թվականին ստեղծված մարմինը՝ Ներդրումների աջակցման կենտրոնը, ըստ էության տարիներ ի վեր գործող ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնն է, որն անվանափոխվեց Ներդրումների աջակցության կենտրոնի: Իրականում այս փոփոխությունների արդյունքում տուժեցին և՛ ՓՄՁ, և՛ ներդրումների մասերով իրականացվող աշխատանքները:

- 2019 թվականին ընտրված կառավարությունը նպատակադրվել էր մինչև ծրագրի իրականացման ավարտը հիմնական միջոցների տարեկան համախառն կուտակումը ՀՆԱ-ի նկատմամբ հասցնել 23-25% մակարդակի: 2020 թվականի դրությամբ այդ ցուցանիշը կազմել է 16,6%, ինչը վկայում է, որ նախանշված ցուցանիշը անհասանելի էր այդ կառավարության համար:
- 2021 թվականի կառավարությունը նախատեսում է ներդրում/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25%-ի, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 6%-ի: 2020թ. ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 17,9%, 2021թ. առաջին կիսամյակում այն աճել է ընդամենը 0,2%-ով: Նշված տեմպերով շարժվելու դեպքում, իհարկե, հնարավոր չէ հասնել նախանշված ցուցանիշներին:
- ՕՈՒՆ/ՀՆԱ ցուցանիշը 2020 թվականի տվյալներով կազմել է ընդամենը 0,93%: Կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշին հասնելու համար օտարերկրյա ուղղակի ներդրումները պետք է աճեն մի քանի անգամ, այն էլ՝ եթե ՀՆԱ-ն էական փոփոխությունների չենթարկվի: Այսօր, հաշվի առնելով ներդրումային քաղաքականության և օրենսդրության ներկա վիճակը, այս ցուցանիշին հասնելն անիրատեսական է:

Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն

(շարունակելի)

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: